


ԲԱԺԱՆՈՂՈՒԹՅԱՆ ԱՆՎՈՐՈՒԹՅՈՒՆ

Պոչկարիոյ համար	
Տարեկան	12 ֆր.
Վեցամսեայ	6 »
Արսասահմանի համար	
Տարեկան	15 »
Վեցամսեայ	8 »
Ամերիկայի համար	
Տարեկան	3 ֆր.
Վեցամսեայ	1.50 »
ԿԱՆԻՍԻԿ ՎՃԱՐՆԵԼԻ	

Իրանացի սուրբ անուշիկի նկարի համար 40 սակարկի կ. իսկ վերջին նկարի համար 20 սակարկի կ. նրին հետևի սակարկներու համար 20 Օլո գեղջ կրկայ :

Պոչկարիոյ համար ձեռքի (15 ԱՆԻՍԻԱ)
Վառնայի համար ձեռքի 10 սակարկի



Նամակ կը լորկիչ
Նամակիկ
R. P. Kalémcarian
Mechitharistangasse W. 4
Vienna
на вѢСТНИКЪ
«Шаржумъ»
Варна
Redaction du journal
«Charjoun»
Varna (Bulgarie)

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ
ԿԸ ՀՐԱՏԱՐԱՎՈՒԹՅԱՆ ԶՈՐԵԲՇԱԲԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ ՕՐԵՐԸ

Отговорникъ: Д-ръ Никола Бакърджиѳвъ

Վրասահմանի համար ձեռքի (20 ԱՆԻՍԻԱ)

ԵՐՈՊԱԿԱՆ
ՀԱՅ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ

Գրեթէ երկու տարի առաջ՝ «Շարժում»ը հայ հասարակութեան աւետեց Եւրոպայի հայ ուսանողութեան երկրորդ համագումարը Հայդէլբերգում, շեշտեց այդ տեսակ ժողովների և ուսանողական միութեան օգտակարութիւնը :

Այսօր աւելի մեծ ուրախութեամբ հաղորդում ենք որ Հայ Ուսանողական Միութիւնը իր երրորդ համագումարում կանոնագրութիւն է մշակել և իբր մի կազմակերպված մարմին հրատարակ է հանել իր կանոնագիրքը :

Այստեղ մենք այդ կանոնագրութիւնից մէջ կը բերենք միայն այդ սքանչելի Միութեան նպատակին վերաբերող կէտերը, խոստանալով «Շարժում»ի մօտակայ համարներից մէկում արտատպել ամբողջ կանոնագրութիւնը, որպէսզի մեր ընթերցողները լաւ ծանօթանալով Ուսանողական Միութեան տրամադրութիւնների հետ, և իրենց պարտականութիւնը կատարեն :

Ուսանողական Միութեան նպատակը .

1. Բարոյական կապ հաստատել Եւրոպայի հայ ուսանողների և ուսանողական խմբերի մէջ :
2. Նպաստել նրանց ծանօթութեան հայոց կեանքի և մասնաւորապէս հայերի քաղաքական կացութեան հետ :
3. Զգուշ ծանօթացնել հայերը Եւրոպացիներին :
4. Հրատարակել հայոց վերաբերեալ և նոյն հարցին նպաստող ինքնուրոյն և թարգմանական գրքեր հայերէն լեզուով : նոյնպէս և օտար լեզուներով, եթէ կարելի լինի :

Միութիւնը իր այս նպատակը պէտք է իրագործէ ուսանող անդամների անդամավճարներով և կամաւոր ներատուութեամբ :

կարող է ունենալ ուսանողը իր ուսանողական շրջանում : Մի նպատակ, որը իրագործելու միջոցին նա կը վարժվի գաղափարական լինելու և կեանքի մէջ, ու, իբր որոշ չափով պատրաստված մարդ, իր գաղափարական գործունէութիւնը կեանքի մէջ էլ կը շարունակէ :

Բայց այդ նպատակը լայնօրէն իրագործելու համար ուսանող անդամներին վճարները շատ չնչին են լինելու : Միութիւնը անհրաժեշտաբար օժանդակ նուիրատուների պէտքը կզգայ :

Մենք մի քանի անգամ շեշտել ենք որ մեր հասարակութեան համար կազդուրիչ գրքեր են հարկաւոր. հրաւէր ենք կարգացել Եւրոպական լուսաւորութեան կեդրոններում ապրող հայ երիտասարդութեան նախաձեռնարկ լինել և ուժ տալ հրատարակչական գործին, և այսօր մեր ուրախութեանը չափ չը կայ երբ տեսնում ենք որ Ուսանողական Միութեան նպատակի մէջ այդ կէտը շեշտված է :

Բայց, ինչպէս ասացինք, ուսանողական անդամավճարները շատ քիչ են հրատարակչական գործին մեծ ծաւալ տալու համար. հայ հասարակութեան օժանդակութիւնը անհրաժեշտ է :

«Շարժում» իր կողմից խոստանում է ամեն ճիշդ թափել նիւթայէս և բարոյապէս օգտակար հանդիսանալ Ուսանողական Միութեան հրատարակչական գործին, իր ուժերի չափով իհարկէ. միանգամայն հրաւէր է կարգում այդ գործը սիրողներին ձեռք մեկնել Ուսանողական Միութեան ժողովուրդը գիրք չունի. կողկասի մէկ հատիկ Հրատարակչական Ընկերութիւնն էլ չը կայ, անհատական ուժերով, բաժան բաժան մենք անկարող ենք այդ գծարին գործը նպատակաւոր մար կերպով առաջ տանել. ուրեմն ուժ տանք Ուսանողական Միութեան, քաջալերենք նրան. նա ամենամեծ յարմարութիւնները ունի այդ գործը առաջ տանելու, միայն դրամ չունի. և չի կարող ունենալ, որովհետեւ ուսանող է :

ՎԱՐԿՈ

ՆԱՄԱԿՆԵՐ ՌՈՒՍԱՍՏԱՆԻՑ)4(

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՏՍԱԿԱԶԱՅ
Գ Ա Ղ Թ Ա Կ Ա Ն Ե Ր Ը

Երեք տարի է ի վեր գաղթականներու վերադարձի խնդիրը ուսանական պահանջումն ընդունաւ ճառաւ քաղաքական հարց մը եղաւ և այսօր հայկական խնդրի ազգակներէն մին կը համարուի :

Մեր մէջէն շատեր մօտէն ծանօթ չը լինելով կազկասի մէջ զիտեղում տաճկահայ նորագոյն գաղթականութեան, կը կարծեն թէ ատենց երկիր վերադառնալը բարեբաղդութիւն մըն է գաղթուններուն և ընդհանուր հայութեան. ուստի երբ Ռուսաստանը վերադարձի առաջարկ կընէ բարեգուշակ նշան կը սեպեն ու կուրախանան :

«Վերադարձի» խնդրին օգտուարութիւնը կամ վնասակարութիւնը հասկնալու համար, անհրաժեշտ է գաղթելու պատճառներու և գաղթականութեան ներկայ տնտեսական վիճակին վրայ ամփոփ տեղեկութիւններ ունենալ : Դժբախդարար ներկայ տեղեկութիւնս լիակատար չի պիտի լինի, ուսանական հայաստանի մէջ հաստատուած գաղթականներու մասին որոշ թիւեր ձեռքի տակ չունենալուս. սակայն ուսանական Սեւ Մովսիս եզերքին սփոսած գաղթականները ամենամեծ տուկոսը կազմելով տաճկահայ գաղթականութեան, անոնց վիճակի ուսումնասիրութիւնը կարող է մեզ հիմնակէտ ծառայել որոշ եզրակացութիւններու հասցնելու համար :

1. Հին ու նոր գաղթականները .

Սեւ Մովսիս շրջանի տաճկահայ խմբովին գաղթականութիւնը 70 թուականներուն կախի, որ հետզհետէ շարունակուելով մինչեւ 1895 թիւը պատկառելի գումարի մը կը հասնի. ատենք կը կազմեն ներկայ գաղթականութեան մեծագոյն մասը (Կրեք շորորդը) կը կոչուին հին գաղթականներ : Իսկ նոր գաղթականները կոտու-

րածներու երկրորդ տակ 1895 էն սկսած գաղթուններ են, որոնք խառնուելով հիներուն հետ, կը կազմեն մօտաւորապէս 21 հազար հոգի : (*)

2. Գաղթականներու պարագամները կամ գասակարգը .
Գաղթականներու մէջ կան .
Ա. Վաճառականներ,
Բ. Արհեստաւորներ,
Գ. Բանուորներ,
Դ. Երկրագործներ :

Ա. Վաճառականները թուով շատ քիչ են և (հաշիւ 10 տուն կամ 150 շունչ) մեծ մասամբ Տրապիզոնցիներ, 100--150 հազար բուրջի կարողութիւն ունեցողներ 2--3 ընտանիքէն աւելի չեն : Ռուսահայտակներ քիչ կան մէջերին, թէեւ անշարժ կալուածներ ունին : Ռուսահայտակ հիները Տաճկաստանէ գաղթած են պատանեկութեան ժամանակ չքաւոր վիճակի մէջ և օգտուելով նպաստաւոր առիթներէ կարողացեր են բարեկեցիկ դիւր : ձեռք բերել : Նորերը կոտորածներէ վերջ Տրապիզոնէն Պաթում փոխադրած են իրենց առեւտրական տունները :

Իբրեւ դրամատէր, պատուհաս եղած են իրենց հայրենակից աշխատաւոր գասակարգին, օգտուելով անոր խելճ ու անպաշտպան դրութեանէն. միայն մէկը (Սոչի շրջանի մէջ) իսկապէս օգնած է հազարաւոր անճար ներկրագործներու, պաշտպանելով զանոնք չինովնիկներու կամայականութիւններէն և տասնեակ հազար բուրջիներ փոխ տալով ոչինչ ունեցող գիւղացիներու, առանց վաշխառական միջոցներու :

Բ. Արհեստաւորներ : (Մօտաւորապէս 1500 շունչ)

(*) Ներկայ տեղեկագրութեանս մէջ գործածած թիւերս ամենամօտաւոր չափն են. կանոնաւոր վիճակագրութիւն չը լինելով, բնական էր որ կանոնաւոր թիւեր չը կրնայի ձեռք բերել. սակայն անձամբ պտրտած լինելով յիշած տեղերս, վստահ եմ որ մեծ սխալներ չեն լինիր. մասնաւորապէս որ միշտ նուագագոյն թիւերը աչքի առաջ ունեցեր եմ :

Սրանից էլ ի՞նչ լաւ նպատակ

—(—)

Այս դասակարգին մէջ հաշ-
ուած եմ նաեւ զանազան մանրա-
վաճառներ, խահուէճիներ և նա-
ւաժարներ. որոնք ծովեզրերէն
առնուին քաղաքներու մէջ ցրուած
են. գլխաւորապէս Պաթում, Սո-
խում, Նովորոսիսկ :

Մեծ մասամբ Տրապիզոնցիներ
են և անոր գաղթականներ :

Գ. Բանուորներ : (Մօտաւորա-
պէս 1250 շունչ) :

Մշտցիներ, ախալցիներ,
պուլաւըլցիներ, բաբերդցիներ
տրապիզոնցիներ, շապինգարա-
հիսարցիներ ևն են :

Ասոնք երկրին մէջ մեծ մա-
սամբ հողատէր երկրագործներ
են և մասամբ արհեստաւորներ.
Հիմա օրականով կը բանին. Պա-
թում նաւթի գործարաններուն
մէջ և նաւամատոյցներու վրայ.
Փոթի մարկանդիզի և լալուժի
ամբարներուն շուրջը. Սոխում
Սօչի և Եկատերինտար, երկրա-
գործական աշխատանքներ կը
կատարեն և ծխախոտի հակեր կը
կապեն :

Կէլիճիք և Նովորոսիսկ, ցի-
մէնթի հանգերու և գործարան-
ներու մէջ. մեծ մասամբ Մշոյ
գաւառէն են. կերչ—նոր բաց-
ուած երկաթի ևն գործարան-
ներու մէջ. Թէոփոսիա—նաւա-
մատոյցներու վրայ. Եալթա—նա-
ւամատոյցներու վրայ և քարա-
հանքերու մէջ. Սեւաստաբոլ և
Օտէսա—նաւամատոյցներու վրայ :

Մեծամասնութիւնը հինէն
գաղթած է :

(Շարունակելի)

ՄԱՏԵՆԱԽՕՍԱԿԱՆ

Դրպանի Ասլան, կազմեց Հ. Ս. Էփ-
րիկեան, Տպագր. Վեհեթիկ, Ս. Ղազար,
1901, գին 3 ֆրանկ :

Կարեւոր պահաս մըն է որ գու-
բայ լրացնել Հ. Էփրիկեան իր գըր-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄԱԿԵՂՈՆԱՑԻՆԵՐԸ

II

Երկու սպաների հետ մենք մօտ
բարեկամներ դարձանք, մանաւանդ
աւելի երեսասարդի. որչափ Ռուս-
չուք գնայի շարունակ միմեանց հետ
էինք. Սպա բարեկամիս համոզմուն-
քով յեղափոխութիւնը յաջողելու ա-
մենակարեւոր պայմանը դրամը և
գրամն էր. ու այդ գրամը պէտք է
ձեռք բերվէր նոյնիսկ ամենախիտ
միջոցներ գործ գնելով, ամեն Մա-
կեղոնացուց. Հազար ու մի տեսակ
ծրաղիքներ էր կաղմուծ այդ անհրա-
ժեշտ հարցը լուծելու համար Գեշեր,
ցեբեկ, հացի վրա, տունը, սրճա-
րանում, գրօտավայրում նրա մտա-
ծողութեան նիւթը շարունակ Մա-
կեղոնիստ և նրա ազատութեան

պանի «Ատլաս»ով, ընտիր թուղթի
վրայ. մարտը և խնամքով պատ-
րաստուած ճաշակաւոր կազմով առ-
լասիկ մը որուն պէտքը այնքան
զգալի դարձած էր հայ վարժարան-
ներու մէջ :

Առլասը աշխարհագրութեան դա-
սին համար, գրքին չափ և անկէ
աւելի անհրաժեշտ դասական ասոր-
կան է աշակերտներուն : Այն օրէն
ի վեր, երբ հազարաւոր քաղաքի ա-
նուներ և անհասնում գետ ու լիւ
մեքենաբար իրարու ետեւէ գոց ընել
տալով աշխարհագրութեան դաս ա-
ւանդելու յաւակնոտութիւն ունեցող
երանելի պատուելիները իրենց կօ-
շիկներուն փոշին թոթուելով գուրս
ելան վարժարանէն. այն օրէն, երբ
աշխարհագրութիւնը Լազիսի բառով
ու քիչ մը չափազանցօրէն թերեւս
«գիտութեանց է՛ն փիլիսոփայականը»
նկատուեցաւ, այնքան կարեւոր
որքան մայրենի լեզուն ու թուա-
բանութիւնը, այն օրէն ամեն նոր
ուսուցիչ աւելի լաւ հասկնող ու ա-
ւելի լաւ պատրաստուած—կենթագ-
րեմ—խնամքով ու ճշգիւ գծուած
քարտէսներու ու աղաներու պէտքը
զգաց. վարժարանին մէջ, պատերուն
վրայ միայն իբրեւ դարդ կախուած
և պատէն անգամ մը գունէ տեղէն
վար չարտուած պատի քարտէսները—
եթէ երբէք ճոյս թիւն ունեցած էին
մեր վարժարաններուն մէջ—աշա-
կերտներուն հաճոյալի բե արդիւ-
նաւոր աշխատութեան նիւթ սկսան
հայթայթել. աշխարհագրութիւնը
ձանձրանալի ու դժնդակ քիւ մը ըլ-
լալէ հետո, սկսաւ սիրուիլ անոնցմէ,
և հակառակ գտնուած անյարմար և
տակաւին հին դրութեան գրոշմը կը-
րող դասագրքերու, աշխարհագրու-
թեան դասը հայ վարժարաններու
մէջ տակաւ իր վայել տեղը սկսաւ
գաստիլ :

Բայց որքան ալ ուսուցիչ մը իր
աւանդած աշխարհագրութեան դասին
տիրացած ըլլայ, որքան ալ դպրոց-
ներու մէջ կանոնաւոր պատի քար-
տէսներ գտնուին, աշակերտը գասէն
լիապէս օգտուելու համար. պէտք է
իրեն սեփական առլասը ունենայ,
որպէս զի կարողանայ, առանձին հե-
տելի ո սանելիք երկրին ընդհանուր
ձեւին, ջրերուն, լեռներուն յարա-
բերական դիրքին, քաղաքներուն
մտտութեան կամ հեռաւորութեան :
Այս կերպով, գրքին մէջ աշակեր-

գործն էր, Այգպիսի յեղափոխական
տիպչաւ քիչ էի տեսել. Եւ այդ
մարդը իր ամենալայն ձգտումներով,
իր անուրանալի քաջութիւնով անձ-
նագործութեամբ, իր ամենալաւը բայց
պարզ մտածումներով, այնքան
պարզ, այնքան դիւրամատչելի և
այնքան համեստ էր, որ նրան լաւ
չըմբռնողը, լաւ չը ճանաչողը մի
տեսաւ, յեղափոխական գործի դժու-
րութիւններին անձանթ զեռահաս
երիտասարդի տեղ կընդունէր. Ոչ ոք
կարող էր երեւակայել որ այդ զարթ
սպան քաջութեան բացառիկ օրինակ-
ներ էր տեսել իր հայրենիքի փրկու-
թեան գործի մէջ. ոչ գործերի հետ
միասին, այլ մի բուն յեղափոխա-
կաններին հետ :

1898ի ձմեռն էլ Ռուսչուք գնացի :
Մի գիշեր սպաի բնակարանում
էինք. եկել էր և մի Մակեղոնացի
գործիչ, Թուրքիայից : Սպան դիմեց
նրան տեսելով :

— Պետիք, հապա պատմիր մեր ժո-
ղովրդի քաջաների և տրամադրու-
թեան մասին. պարունին հաւատա-

տին կարդացած անունները իր մըտ-
քին մէջ կը անձնաւորուին ու կը
կենդանանան, առանց որուն դասին
ամբողջ ծանրութիւնը լսուի ու ան-
պէտք յիշողութեան մը բունի ճիգե-
րուն մէջ պիտի ամփոփուէր լոկ :

Արդ ուսուցիչը չի կրնար զանց
ընել առլասը, զոր ամէն աշակերտ
դասի առնել պէտք է իր առջեւ ու-
նենայ ու լարուի ուշադրութեամբ
արուած բացատրութիւններով և
կիրպով մը զանոնք ստուգէ, առլա-
սին վրայ հետեւելով :

Հ. Էփրիկեան իր առլասով ամէն
յեղչեղուած առարկութեանց վերջ
կը գնէ, ահա ու դիւրամատչելի ու
ըստ կարելւոյն ամբողջական գործ
մը հրապարակ հանելով : Առլասը
բացի աշխարհագրոց քարտէսներէն
կը պարունակէ նաեւ մայրաքաղաք-
ներու զանազան տեսարաններ, այլ
և այլ տէրութեանց գոյնզգոյն դօ-
շակներու առանձին տարտակ մը :

Առլասին սկիզբը զետեղուած են
զանազան աշխարհագրական, տիե-
զերագրական, վարչական ելուստա-
կան ծանօթութիւններ աշխարհի
բոլոր գլխաւոր տէրութեանց վրայ,
որոնք աշակերտին միշտ պիտի յի-
չեցնեն իր սորված երկիրներուն
բնակչամ, տարածութեան թիւերը,
և միշտ անոնց աչքին առջեւ պիտի
գնեն զանազան անհրաժեշտ տեղե-
կութիւններ վաճառականութեան,
հաղորդակցութեանց, կլիմայի, բեր-
քերու և այլ բաներու վերաբերեալ
իր այս մասով, առլաս կրնայ օգ-
տակար ըլլալ նաեւ վաճառականե-
րու և ճամբորդներու :

Առլասը կը պարունակէ նաեւ ան-
ուանց Յանկ մը, ուր ամփոփուած են
քարտէսներու մէջ գործածուած բոլոր
անունները : Ըստ իս, այս Յանկը
աւելորդ էր : Մանաւանդ այն կերպը
որով աշակերտին կը յանձնարարուի
ցանկը նայելով քարտէսին վրայ
քաղաքը գտնել, բոլորովին անգործ-
նական կը գտնեմ. աշակերտը աւե-
լի դիւրութեամբ Այտլին քաղաքը
կը գտնէ ուղղակի Իսլանտայի մէջ
փնտնելով. քան թէ Հ. Էփրիկեանին
յանձնարարածին նման Գ. ու Ե գրե-
րը նախ փնտնելով, (որոնք շատ ալ
նշմարելի չեն անվարժ աչքերու,
ինչպէս աշակերտներուն) որոնց կազ-
մած քառակուսիին մէջ կիսնայ այդ
քաղաքը :

Այդ ցանկին տեղ, աւելի օգտա-

կար պիտի ըլլար, եթէ օրինակի
համար Մ. Կահանգները առանձին
քարտէսով ներկայացուած ըլլար :

Նոս գտնուէր երկու կիսազետե-
րուն շրջանակաձեւ համայնացոյց
քարտէսը, ուր աշակերտը որոշապէս
տեսնէր երկու կիսազետեւերու կազ-
մական տարբերութիւնը, նշմարե-
լով, օրինակի համար, թէ ցամաքի
մեծագոյն մասը հիւսիսային կիսագն-
տին մէջ կերեւոյ, իսկ հարաւային
հիւսագունտը, գրեթէ Ովկիանիայի
և նոր Ամերիկայի փոքրիկ մէկ մա-
սէն զատ, ամբողջովին ջրով ծած-
կուած է :

Առլասը կը պարունակէ 16 քար-
տէս, որոնց 10 հատը Եւրոպայի հա-
մար է, հատ մը Ասիայի, հատ մը
Ափրիկէի, երկու Ամերիկաներու և
Ովկիանիայի համար, Ամէն Եւրո-
պական երկիր իր առանձին քարտէս-
ունի, կոկիկ բոլոր կարեւոր ման-
րամասնութիւններով :

Հապա Հայաստան պիտի հարցնէ
առլասը ձեռքը առնող շարածիճի ա-
շակերտ մը. գոնէ ֆոքր Ասիոյ քար-
տէսին մէջ անունն ալ չէ նշանակ-
ուած : Հոգ չէ քանի որ Թուրքիոյ
մաքսատուները կատարօրէն կը
սպառնան այդ բառին ու ամբողջ
ստրասին մտաքը կը վտանգեն :
Բայց խղճամիտ ուսուցիչը կրնայ իր
մատներով նշանակել անոր տեղը և
այդպէս գահացում տայ աշակերտին :
Ապահովաբար թուրք մաքսատան
սպառնալիքը մինչև հոն չի պիտի
կրնայ ազդել . . .

Վերջապէս մեկ համար իր տեսա-
կին մէջ միակ աշխատութիւն է, զոր
պէտք է ամեն կերպ քաջալերել զոր-
ծածելով մեր բոլոր վարժարանե-
րուն մէջ, որպէս զի հեղինակն ալ
յառաջիկային աւելի ընդարձակ ու
աւելի ճոխ առլաս մը պատրաստելու
եռանդն ունենայ :

ՇԱՀԱՊ

ԹՈՒՐԻՔԻԱ ԵՒ ՀՐԷԱՆԵՐԸ

Սուլթանի քունը խանգարող
ժողովուրդները քիչ էին, հիմա
ալ հրէաները աւելցան :

Միօնականները, ինչպէս կե-
րեի մեծ անհանգստութիւն կը
պատճառեն Համիտին, որ սկսած

խառող չը կայ, Բարձր. Կօմիտէն
միայն անուանով գոյութիւն ունի,
արդիւնք չը կայ : Այսօր մեր կազմա-
կերպութիւնը այնքան աղքատ է որ
գործակատարների, քարոզիչների հա-
մար ճամբու ծախք չը կայ :

— Դրա պատճառը գուցէ ազատ
բուլգարների անտարբերութիւնն է :

— Ոչ, ազատ բուլգարները ան-
տարբեր չեն. եթէ Բարձր. Կօմիտէն
չնորհրդով գործէր, մեր գործերը հիմա
այս վիճակի մէջ չէին լինի :

— Ուրեմն գո՞ւր էլ կարծում էք
որ ներկայ Բարձր. Կօմիտէն պէտք է
տապալել :

— Ոչ միայն Բարձր. Կօմիտէն պէտք
է տապալել, այլ ամբողջ կազմակեր-
պութիւնը պէտք է վերանորոգել,
վերակազմել, պէտք է այնպիսի հի-
մեր վրա գնել, որ նա Բուլղարիա-
յում զանազան նպատակներ համար
չապագործելու միջոց չը պատնայ :

— Այո, այո, եկող ամառ ընդհա-
նուր ժողով ունենը Սօֆիայում, մի-
ջամտեց սպա բարեկամս, և մեծ յոյս
կայ որ այդ ամէնը կը կարգադրվի :

է հրէաներն ալ սեղանելու միջոց- ներ ձեռք առնել :

Ահա թէ «թանձր» այդ մասին ինչ կը գրեն Պոլսէն :

«Սիօնականներու շարժումը օր- ուան խնդիր է, ուրեմն Երուսա- րէմ ուխտի գացող իսրայէլացի- ներու համար անօգուտ չէ գիտ- նալ այն կարգադրութիւնները զորս թուրք կառավարութիւնը բրած է անոնց վերաբերմամբ :

Յօդ. Ա. — Երուսաղէմ ուխտի գացող ամեն հրէաները պէտք է ունենան անցադիր և «թէ» քէրէո որոնց մէջ նշանակուած պիտի ըլլայ իրենց սրու հպատակ ըլ- լալը, արհեստը և ճամբորդու- թեան պատճառները :

Այս կարգադրութիւնը կը վե- րաբերի ոչ միայն օսմանեան հպատակ հրէաներուն, այլ և օ- տարահպատակներուն :

Յօդ. Բ. — Սխտաւորները Պէ- րուսի կամ Երուսաղէմի գաւառի ու և է նախահանգիտ մը հասնել- նուն պէս իրենց անցադիրները և «թէ» քէրէոները պիտի յանձ- նեն թուրք պաշտօնեայի, մէկ զուրուշ պիտի վճարեն և ստա- նան առժամեայ բնակութեան ար- տօնադիր մը, երեք ամիս պայ- մանաժամով : Եւ ան գոյնով ու բազմաթիւ թիւով սարքեր պիտի ըլլայ, որպէս զի բուն անցադրէն զանազանուի :

Ամէն ուխտաւոր պիտի ներ- կայանայ օտարականութեան երբ անոր կողմէ փնտռուի :

Երեք ամիսը լրանալէ վերջ, կամ յանցանքի մը մէջ բռնուած ատեն, օտարահպատակները պի- տի յանձնուին իրենց հիւպա- տոսներուն փակ թրքահպատակ- ները տեղական իշխանութեան :

Յօդ. Գ. — Պատասխանատու և յանցապարտ պիտի ճանչցուին անոնք որոնք նշանակուած երեք ամիսը անցնեն : Մասնաւոր օ- մար մը պիտի պահուի ուխտա- ւորներու գալու և երթալու թուա-

կանները քննելու համար : Այդ քննութիւնը ամեն ամիս պիտի կատարուի Այս յօդուածին տրա- մագրութիւններուն չը հնազան- դողները օրէնքի հակառակողներ պիտի ճանչցուին :

Յօդ. Դ. — Վերագարձին ուխ- տաւորները այդ արտօնագրերը պիտի յանձնեն թուրք իշխանու- թեան և նա տարին անգամ մը պիտի զրկէ Երուսաղէմ ուր պիտի բազմաթիւ իրենց կտրօնե- րուն հետ :

ՎԻՔԹՈՐԻԱ ԹԱԳՈՒՆԻՆ

Վիքթորիա մեռաւ 82 տարե- կան հասակին մէջ, կէս դարէ աւելի թագաւորելէ յետոյ : Իր այդ երկարատեւ թագաւորու- թեանը մոլոցին Անգլիա միայն երկու լուրջ պարերազմունեցաւ : մէկը խրիմիւնը միւսն ալ այս օ- րերու թրանսօվալի պատերազմը : Միայն թուրքները Անգլիոյ մէջ վարկաբեկող նախնիքելէ մը անմիջապէս վերջ 29 տարեկան Վիքթորիա Բրիտանական գահը բարձրացաւ և իր բարեմասնու- թիւններով, կէս դարուայ թու- գաւորութեանը միջոցին արքա- յական տունը սիրելի ըրաւ անգ- լիական ժողովրդին : Անգլիա սի- րելի թագուհիին օրովը հսկա- յական քայլեր առաւ խաղ յա- ռուջադիմութեան մէջ :

Սակայն ինքը Վիքթորիա, աշխարհիս ամենաբարձրակ- կայսրութեան վեհագետուհին, անձնապէս դժբաղդ եղաւ, մա- նաւաճ իր վերջին օրերուն մէջ :

Մահուան պատճառը թէ ծե- րութիւնն էր և թէ ծանր վշտե- րու տարափ մը որ իր վրայ եկաւ վերջին օրերուն մէջ : Իր սիրելի թուան Բրիտանիայի Վիքթորիա Բրե- թօրիայի մէջ և իր հին մտերիմ բարեկամուհիին Լետի 25օրչէլին

մահը ծննդեան առաւօտուն, պա- լտախն մէջ, թագուհուն գրեթէ յովիկը, իր աղջկան Գերմանիոյ այրի կայսրուհիին ծանր հիւան- դութիւնը և վերջապէս թրանս- վալի անարդար պատերազմը, որ թագուհին ստորագրեց, բայց չորոշեց : Միւս նոյնպէս ալ մարմ- նական հիւանդութիւնները եկան միացան իր հոգեկան տառա- պանքներու և թոյլ ծերութեանը հետ ու տապալեցին զինքը, այդ դար մը ապրող թագուհին, որ մահով զատուած իր սիրելի շրջապատողներէն, իր մեծ առանձնութեանը մէջ մենացած շարունակ կուլար, առանց կա- սեցնել կրնալու իր արցունքները մինչեւ որ հոգին աւանդեց :

ՆԱՄԱԿ ԽՄԱԿՎՈՐՈՒԹԵԱՆ

Գուժան անունով հանդիսի մը հրատարակութեանը ձեռնարկած եմ որուն առաջին թիւը արդէն մամուլ տակ է և մի քանի օրէն լոյս պիտի տեսնէ :

Գուժանի նպատակն է ժողովրդա- կանացնել զիտութիւնները, հողա- գործութիւնը և արուեստները : հա- մախմբել մասնագիտական ոյժերը, որոնք ներկային մէջ գրական ան- գործութեան մէջ դասապատուած են՝ մեծաւ մասամբ առ ի չգոյժ մասնա- գիտական հանդէսի մը : Գուժան պի- տի աշխատի մշակել մասնագիտական լեզուները և պիտի պատասխանէ ժողովուրդի ըրած մասնագիտական հարցերուն :

Կարգ մը հայ և ֆրանսացի կա- րող մասնագէտներ արդէն պատաս- խանած են մեր հրաւերին :

Տիար խմբագիր, եթէ Գուժանի նպատակը գնահատէք, բարեհաճեցէք ձեր թերթի սիւնակներէն մէկուն մէջ անոր յայտարարութեանը տեղ մը տալ :

Հաճեցէք ընդունել յարգանացս անկեղծ հաւատին

Գ. Գ. ՄԵՆՍԱՏՈՒՐԵԱՆ

Փարիզ, 4/17 Յունիս

—)(—

Յ ԻՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ,
ԳՈՒԹԱՆ
Հ Ա Ն Դ Է Մ Ա Մ Ս Ե Ա Յ
Հոյազորժակաւ, Գիտական և Արուես- սական (պակերներով)

ՏՃօրե՛՛՛
ԳԱՐԵԳՐԻ. Գ. ՄԵՆՍԱՏՈՒՐԵԱՆ

Գուժանը մամուլ տակ է և մի քանի օրէն լոյս պիտի տեսնէ, հայ և ֆրանսացի աշխատակիցներու աշ- խատակցութեամբ :

Առ այժմ ամիսը անգամ մը պիտի հրատարակուի Գուժանը և իւրա- քանչիւր թիւը պիտի բաղկանայ 16 էջէ :

Տարեկան բաժնեգրին է
Թուրքիոյ համար 10 ֆրանք
Ռուսիոյ » 6 րուբլի
Արտասահմանի » 12 ֆրանք
Յօդուած, նամակ և բաժնեգրին զրկել :

K. Médadourian—Ingenieur—Agronom
23 rue de la Bollegéale (Vme) Paris

Ն Ա Մ Ա Կ Ա Տ Ո Ւ Փ

Ամերիկայի և Եգիպտոսի չը վճարող բաժանորդներուն. — Կը խնդրենք շտապել բաժնեգրին- ները մինչեւ Փետրուար մէկ ան- պատճառ հասցնել մեզ : Մինչեւ այդ ժամանակ չը վճարողներուն այլեւս «Շարժում» չի պիտի զըր- կուի : Միեւնոյն ժամանակ չը վճարողներուն անունները պիտի հրատարակուի «Նարժում» մէջ :

Հ. Ս. ԷՓՐԻԿԵԱՆ

Պատկերագրող բնաշխարհի բառարան

Այս հոյակապ գործին Բ. պրակն ալ հրատարակուած է :

Ա. պրակ զարդարուած 80 պատ- կերներով :

Բ. պրակ զարդարուած 91 պատ- կերներով :

Իւրաքանչիւր պրակ ճամբու ծախ- սով կարժէ 3 ֆրանք :

Հասցէ՛

Imprimerie Armenienne St. Lazare (Italie) Venise

—)(—

Ու այդպէս երկար խօսելուց յետոյ լուսադէմին ևս վերագարձայ հիւրա- նոց, գոնէ մի երկու ժամ քնելու, ու ըրովհետեւ միւս առաւօտ ճամբորդ էի :

Մակեդոնական յեղափոխականների ընդհանուր ժողովը տեղի ունեցաւ, հին Բարձր. Կօմիտէն տապալվեց, բնարկեցին զուտ յեղափոխական մարդիկ, Կօմիտէն սկսեց ևս անդուն կերպով գործել. Բուլղարիան ծած- կվեց մասնաձեւերով, զրամը ջրի պէս սկսեց թափվել յեղափոխական գրամարկի մէջ, նայն ետանգով գործը տարվեց և Մակեդոնիայի մէջ ու սլլ տեղեր. այսօր Մակեդոնական Կօմիտէները ցանցի պէս տարածվել են Տաճկաստանում, Բուսանիայում և Բուլղարիայում. գրեթէ ամեն բուլղար մասնակցում է ներքառու- թեան, առանց սեռի և դասակարգի խտրութեան :

Այդ Կօմիտէի գլուխներն են երի- տասարդ մարզիկ, օրոնք միայն յե-

ղափոխական անցեալ ունեն. ոչ փաշա, ոչ կաթողիկոս և ոչ միլիտ- նատէր վաճառական է յեղափոխական գործերը վարողը և զրամական գործը կարգադրողը : Ընդհակառակը տա- պալված Բարձր. Կօմիտէի անդամները աւելի բարձր գիրքով և Բուլղարիայի մէջ աւելի մեծ ազդեցութիւն ունե- ցող մարդիկ էին. նրանք ոչինչ արին Մակեդոնիայի համար, և եթէ մի քիչ էլ շարունակէին իրենց պաշտօնը, գործը բոլորովին պէտք է մեռնէին :

Շնորհիւ նոր Բարձր. Կօմիտէին և- տանդուն անդամներին, Մակեդոնական Կօմիտէն այնքան առաջացաւ որ նա յոյս ունի մօտաւոր ապագայում ա- պստամբութեան գրօշակը պարզել, ապստամբութեան ոչ յեղափոխու- թեան, Եւ այդ բոլորը երկու տար- վայ մէջ, երկուս : Ահա թէ ինչ է նշանակում երբ գործի ղեկավար ևս գլուխ լինում են գործի մարզիկը : Ոչ պատակտում տեղի ունեցաւ և ոչ էլ կուսակցութիւններ առաջացաւ. ներկայ Բարձր. Կօմիտէն կարողացաւ իր գործը այնպէս տանել, որ ոչ ոք

կարող է զժգոհ լինել. ոչ ոք կարող է հակառակել, ոչ ոք կարող է ընդ- գրամանալ : Նրա բարոյական ուժը շատ մեծ է, աւելի ևս մեծ է նրա յեղա- փոխական սպանիչ, սարսափեցնող ուժը :

Նրանց օրգանը գեղեցիկ գիտական ճաշակով կազմվող թերթն է, գրա- կանութիւնն է մշակվում այնտեղ : Այդ օրգանի ընթերցողները գրակա- նական մարգարիտներ չեն փնտռում այնտեղ, այլ երկրի վիճակի մասին տեղեկութիւններ, ու զուտ յեղափո- խական գրութիւններ :

Օրգան Բեֆօրմին Բարձր. Կօմիտէի համար ուշագրութեան և հոգածողու- թեան կարեւոր նիւթն է : Այդ յե- ղափոխական մարմնի կարեւոր ու- շագրութիւնը ուղղված է երկրի, ա- պստամբութեան վայրի և գրամի վրա : Կազմակերպութեան եկամտի ամենաչնչին մասն է ծախսվում օր- գանի վրա, մանաւանդ որ նա տա- րածվում է բաժնեգրով :

Ու այս բոլորը տեսնելուց յետոյ, այսօր ևս մտաբերում եմ երկու տարի

առաջ իմ բարեկամ Մակեդոնացիների ասածները թէ՛ սուտ է, մեր ժողո- վուրդը համակիր է յեղափոխութեան, ազատ բուլղարները անտարբեր չեն, այլ Բարձր. Կօմիտէն անշնորհք է և անընդունակ է գործը վարելու :

Ճիշդ էլ այդպէս է եղել :

Անընդունակ, ծոյլ, անշնորհք և ժամանակի պահանջները չըմբռնող հին Բարձր. Կօմիտէն տապալվելուց յետոյ, միմիայն երկու տարվայ մէջ Մակեդոնական յեղափոխական գործը բոլորովին կերպարանափոխվեց : Այն- տեղ ուր մեռելութիւն ևս քուն էր թագաւորում, երեւան եկաւ ետուն կեանքը, որ արագաբար սուրում է զէպի ազատութիւն . . .

ՎԱՐԴՕ

—)(—

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Մամուրեանի մահը մեծ յուզում առաջ բերեց Իզմիրի մէջ. Մամուրեանի լրագրական գործունէութեան առթիւ տարբեր կարծիքի և համոզման մարդիկ անգամ փութացեր են իրենց յարգանքը բերել գրչի հին աշխատանքի գագապին. Յուզարկաւորութիւնը տեղի ունեցեր է յունվար 1ին, ահագին բազմութիւնով և անման շքեղութեամբ. Մասնակցեր են նաեւ օտար մամուլի ներկայացուցիչները, հայ կաթողիկէ և բողոքական հոգեւորականներու ներկայացուցիչները. Յուզարկաւորութեան առթիւ զրոյեցեր են 24 սքանչելի պատկեր, ազգականներու, բարեկամներու և համակիրներու կողմէն:

— «Արեւելեան Մամուլը պիտի շարունակուի հրատարակուիլ և հանգուցեալի կտակին համաձայն տնօրէն խմբագիրը պիտի ըլլայ իր որդին Հրանդ Մամուրեան:

— Տիկին Տիւսարի յուզարկաւորութեան հանգէտն ալ Պոլսոյ մէջ կատարուեր է բուսական շքեղ կերպով:

— 1902 թուին կը լրանայ Մուսկուայի Լազարեան ձեմարանի մասնագիտական դասարաններու գոյութեան երեսնամեակը: Այս առթիւ ձեմարանի վարչութիւնը կը պատրաստէ յիշեալ դասարաններու պատմութիւնը, որու համար նաեւ գիմած է այդ դասարանները աւարտող բոլոր անձերուն հետեւեալ տեղեկութիւնները խնդրելով.

1. Անունը, հօր անունը և մականունը.
2. Երբ են ուսումը աւարտած.
3. Հասարակական գիրքը (պաշտօնը, արհեստը և այլն):

— Պատրիարքը և Ռուսմական Խորհրդոյ գիւանը մխիթարական հեռագիրներ շրկած են Մամուրեանի ընտանիքին:

— Ֆիլիպէի Հայրահայ Գաբրիէլներու թեան անգամուհիները իրենց մէջ բաւական քանակութեամբ հին հագուստներ և միքանի կտոր նոր ձերմակեղաններ հաւաքելով Մինդեան տօներու առթիւ Քայաճըքի կայարանին շքուարիէ ի վեր տիրոջ անգործութեամբ թշուառացեալ Մշեցի պանդուխտ հայ եղբայրները մխիթարած են, ճիշդ օրը օրին շրկելով այդ իրերը: Ընկերութեան անգամուհիներէն մին ալ 25 լէվ շրկած է նոյն կայարանին մէջ գտնուող շատ աղքատ կնոջ մը ծննդաբերութեան անմիջական ծախուց և 15 լի շափ հայ բեռնակիրներու մէկ մէկ փակեղ գնելու համար:

— Ով որ կը փափաքի առնել ութը տարեկան որբ տղայ մը,

Թող հաճի գիմել Աւետիս Զարպահանէլեանի գրատունը:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թ Ո Ւ Ր Ք Ի Ա

Սուլթանը Թուրքիոյ ելեւմտական վիճակը բարւոքելու համար մասնաւոր յանձնաժողով մը կազմեց: Յանձնաժողովի մէջ կը գտնուին երկրին ելեւմտական վիճակին ծանօթ քանի մը պաշտօնեաներ և նախարարներ:

Յանձնաժողովը շարաթը երեք անգամ ժողով պիտի գումարէ պալատին մէջ նոր հասցիներու պիւտեճէն հաստատակաւոր և Թուրքիոյ վարկը օտար երկրներու մէջ բարձրացնելու միջոցներ գտնելու համար, սակայն առանց նոր փոխառութեան, որուն Սուլթանը բացարձակապէս հակառակ է:

— Պիթիլիի նահանգին կեդրոնի մէջ մեծ զօրանոց մը պիտի շինուի:

Հայերուն աչքը լոյս:
— Սուլթանի իրատէին համաձայն պաշտօնեաներու մէկ մէկ ամսական տրուել է:

— Հայֆայէն մինչեւ Գամասկոս երկաթուղիի գիծ մը շինելու համար մեծաշնորհ պիտի տրուի ընկերութեան մը:

— Պոլսոյ լրագիրները կը հաշորդեն թէ՛ պաշտօնապէս ծանուցուեր է որ ոչ Իզմիրի մէջ և ոչ ալ Պոլսոյ մէջ ժամտախա կայ:

ՇՎԷՏ ՆՈՐՎԵԳԻԱ

Հիւսիսային բելեոը օդապարիկով ռուսմասերիւր գացած հոչակաւոր Անտրէն կտակ մը թողած էր որ պիտի բացուէր 1901 յունուար 1ին:

Այդ կտակը յունուար 1ին բացուեր է Անտրէի քրոջ պահանջով:

Սեւեկնքուած ծրարը բացուելուն պէս ընկեր են քանի մը փոքրիկ փաթեթով թղթեր, որոնց վրայ գրուած կայ եղբոր «մի կարգաք վառեցէք»: Ելեր են և քանի մը գիտնականներու նամակներ որոնցմէ միոյն մէջ Անտրէի խորհուրդ տրուած է հրատարակ իր անմիտ ծրարէն և Ֆրանսական «Պոնտիլի» անուն ստորագրութիւնը կը կրէ:

Այդ նամակի վրայ Անտրէ նկատած է:

«Կարելի է որ իրաւունք ունի, բայց արդէն շատ ուշ է, իմ ամէն պատրաստութիւններս վերջացած են և ես չեմ կրնար որոշումէս ետ դառնալ:

Կտակը այնպէս մը գրուած է որմէ պարզօրէն կը հասկցուի թէ՛ Անտրէ գիտէր իր գլխուն գաղբը:

Ահա թէ ինչպէս կսկսի.
«Այս կտակը իմ վերջին գրութիւնն է. կը գրեմ այն պիտի ճամբորդութեան մը նախաբեկոյին, որուն գծուարութիւնները ժամանակակից գիտութիւնը անկարող է հաշուել: Կը նախադրուած թէ այս սարսափելի ճամբորդութիւնը ինձ համար մահ պիտի նշանակէ»:

Թ Ր Ա Ն Ս Վ Ա Լ

Եօհանէսպուրկէ երեք Անգլիական հեծելազուններ Սթրինկսի մօտ յարձակեր են Պօէրներու զինուորական կայարանի մը վրայ և գրաւեր են: Նոյն հեծելազները քիչ մը վերջը ետ մղուեր են Պօէրներու մէկ բուն յարձակումը:

— Պօէրները Պալմօրալի քով գրաւուեր են ռազմական իրեղէններով բեռնուած կառախումբ մը:

— Լօրտ Քիչնէր Բարեյուսոյ Գլուխը պատերազմական վիճակի ենթարկուեր է:

— Կրի զօրավարին զօրախումբը 800 պօէրներ յաղթած է Վանտէրսպուրկի մէջ:

— Անգլիացիները ետ մղած են Քոլվիլ զօրավարին յաղթող պօէրները:

— Կրտսի թէ Մէկլէնպուրկի գուքը բանակցութեան մտած է որպէս զի ձարի և Քրիկէրի միջեւ առսակցութիւն մը տեղի ունենայ:

— Հեռագիրները կը ծանուցանեն թէ Տուէթ զօրավարը կը պատրաստուի նախալ մտնել:

— Լօնտոնի մէջ լուր տարածուած է թէ՛ Քիչնէր զինուորներուն արգիլած է հայրենիք նամակ գրել: Այդ կարգադրութիւնը մեծ յուզում յառաջ բերած է:

Չ Ի Ն Ա Ս Տ Ա Ն

Չինկ իշխանը և Լիհունկ Չանկ զեպաններուն յանձնած են ծանուցագիր մը որ կը պարունակէ Չինու գիտողութիւնները հաւաքական ծանուցագրին զէմ:

Չինացի պատուիրակները խնդրել են որ մօտերս զեպանական գումարում մը տեղի ունենայ այդ գիտողութիւններուն վրայ բանակցելու համար:

— Անգլիոյ բողոքը Ռուսիոյ դէմ, որ կը վերաբերէր Ռուսական քաղաքական հոկոյութեանը Անգլիոյ յանձնուելիք թիէնցիին-Շանկայ երկաթուղիներու վրայ, իր ազդեցութիւնը ունեցած է:

Գիծը առանց ո և է սեղմումի անգլիացիներուն պիտի յանձնուի:

Վալտերլէ որ միջնորդի դեր կը կատարէ պիտի ստորագրէ վերաբնուած պայմանագիրը:

Այդ գծին վերաբնեւալ նիւ:

Թերուն Ռուսիոյ կողմէ գրաւումն ալ անշուշտ բանակցութիւններու նիւթ պիտի դառնայ Անգլիոյ և Ռուսիոյ միջեւ:

— Շանս նահանգին մէջ սով կայ: 5 միլիոն ժողովուրդ կը տառապի:

Ա Ն Գ Լ Ի Ա

Քանի մը թերթեր նախարարութիւնը կշտապեցնեն իշխանութիւնը գահաժառանգին յանձնելու խնդիրը կարգադրել:

Պ Ո Ւ Լ Կ Ա Ր Ի Ա

Պ. Իվանչովի նախարարութիւնն ալ ամբողջովին հրաժարական տուաւ: Իշխանը նոր խորհրդարան կազմել յանձնարարած է ներքին զործոց նախարար զօրավար Բեթրովին:

Թ Վ Տ Ր Ո Ն Ս Ս Ի Ր Վ Լ

«Նոր Աստղ» հայ ղերասանական խումբը, յառաջիկայ կիրակի գիշեր, յունուար 14ին, ի նպատակ Տ. Գալէմեանի պիտի ներկայացնէ «Իմպէ Գըզ» անուն 3 արար օրէքէթը 25 հոգիէ բաղկացեալ:

«Սէվիլի Սափրիչը» խիստ ծիծաղաշարժ զուեշտ 2 արար:

Կ Ի Ր Ե Ո Ւ Ա Ջ Դ

Սուրբ Փրկչի Ազգային Հիւանդանոցի պատուարժան Հոգաբարձութիւնը Պուլկարիոյ մէջ սպառնու համար, ի նպատակ բազմակարօտ հաստատութեան հրապարակ հանուած եւ մասնաւոր խնամքով պատրաստուած առողջի տեսակ սիկարի թղթէն հոս շրկած ըլլալով, կը խնդրուի յարգոյ հասարակութեանն որ նախապատուութիւնն տայ այս թղթին. թէ անոր ընծայած առաւելութիւններուն համար եւ թէ նպատակ ըլլալու համար հարկաւոր խեղճերու հոգատարութեան գծուարին եւ բազմապահանջ գործին:

Գիմել Տիար Պիպերեանի վաճառատունը, միակ կեդրոնատեղի Պուլկարիոյ համար, Տիպէք յէմէ:

Ա Ջ Դ

Հայ-Ռումաներէն Օրացոյց 1901 թիւին, ունենալ փափազող թող գիմէ հետեւեալ հասցէին՝
Ղեւոնդ Քհչյ. Փափապեան
Կալաց (Ռումանիա)

ՉՈՒԿԱՐԱՆ «ԿՈՒԹԷՆԳԵՐԿ»
(Տպագրական տանկրու)

Կարծր մետաղ . Ողիղ կարգ
Հաշաւար քարձրոտրիւն

Ամէն լեզուէ տպագրական տանկր և զանազանք՝ գոհացուցիչ գներով.
Հասցէ՝

Fonderie typographique, Gutenberg, Sophia, Rue Graff Jgnatieff № 3,
22-25

Печатница Хр. Н. Войниковъ—Варна,